

ԴՈՆԱՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բժշկական գիությունների թեկնածու

**ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՅՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ
ԵՐԿԻ՝ «ՈՒՍՈՒՄՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ»
ԵՐԿԻ 550-ԱՄՅԱ ՆՈՔԵԼՅԱՆԸ**

Միջնադարյան հայ մշակույթի պայմանության մեջ եղել են գործիչներ, որոնք իրենց գիտական կենսագրությամբ ոչ միայն բնութագրել են իրենց ապրած դարաշրջանը, այլև առաջնորդող են եղել գիության ավյալ բնագավառի հետագա զարգացման համար: Այս բնութագրումն իրավամբ կարելի է վերագրել ԺԵ ղ. ամասիացի մեծ բժշկապետ Ամիրդովլաթին, որի բժշկագիտական ժառանգությունը մի ամբողջ ուղղություն դարձավ հետագա դարերի հայ բժիշկների համար:

Եւ նրա բեղուն, իր ժամանակի համար զարմանալի բժշկագիտական վաստակի անդրանիկ ստեղծագործությունը՝ «Ուսումն բժշկութեան» գործը միջնադարյան հայ բժշկագիտության մեջ արժեւորվում է որպես տեսական բժշկության կարևոր ձեռքբերում: Նեղինակը բժշկարանը գրել է 1459 թ., եւ այս փաթիլ (2009 թ.) լրանում է Ամասիացի բժշկապետի ստեղծագործական առաջնեկի ստեղծման հինգ եւ կեսդարյա փառքարձը :

Իրոք՝ Մխիթար Ներացի բժշկապետի «Ջերմանց մխիթարութիւն»-ից 275 փաթիլ անց՝ 1459 թ., Ամիրդովլաթ Ամասիացին գրում է իր անդրանիկ «Ուսումն բժշկութեան» գործը, մի եզակի աշխատություն, որի հեղինակային ինքնագիր օրինակը ներկայումս պահվում է Մաշտոցյան Մատենադարանում 8871 թվահամարի¹ ներքո: Այս բժշկարանը միջնադարյան հայ բժշկագիտության համար մեծ արժեք է ներկայացնում թեկուզ միայն այն պատճառով, որ Ամասիացի մեծ բժշկապետի այսօր հայտնի միակ ինքնագիր օրինակն է ու նաև նրանով, որ սա միջնադարյան հայ տեսական բժշկության փաստորեն առաջին ամփոփ գործն է. մինչ այս բժշկարանը մեծն Ներացու եւ այլ հայ բժիշկների բժշկարաններում անշուշտ առկա են տեսական բժշկությանն առնչվող եզրահանգումներ, սակայն որպես տեսական բժշկության ամբողջական գործ, կարծում ենք, Ամիրդովլաթի այս բժշկարանը կարող է համարվել դրա առաջնեկը, բանգի «Ուսումն բժշկութեան» ստեղծագործությունը տեսական բժշկության, մասնավորապես, մարդակազմության, բնախոտության, առողջապահության եւ դեղագիտության մի կարարյալ հանրագիտարան է:

Ձեռագրում առկա է շար կարևոր հիշատակարան, ուր արձանագրված է բժշկարանի գրվելու վայրը (Կ. Պոլիս), թվականը (1459 թ.) եւ պատվիրատուի անունը (Շաղր բեկի որդի Վարդ). «Գրեցաւ թագօրական բժշկարանս ի թվականութեանն հայոց ԶԸ (1459) ամին եւ ի նոյնմբերի ամսուն ի Գ, օրն՝ շաբաթ, եւ քաղաքին Կոստանդնույապոլի եւ ի յառ ուրն վանից սուրբ Ստեփանոսու եւ ի կաթաղիկոսութեանն Տայոց փեռ Գրիգորայ եւ ի հայրապետու-

1 Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթապյան, Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Կ. Բ, Երևան, 1970, էջ 827:

թեանն քեր Մարտիրոսին Կոստանորինոյալու վ[ի]ճակին, եւ ի պարտութեանն Մոսիւմար խանին, եւ ի վայելումն պարոն Շարի պէկի որդոյն՝ պարոն Վարդին, զի յուժ փափաքութեամբ եւ ուղիղ սրտիւ խնդրեց, որ գրուեցաւ գիրքս այս ի յարապի լեզուէ եւ ի պարսի լեզուէ ի հայ բառս մեր: Եւ ոչ գրայ ի բառս հայոց այս ձեռովս բժշկարան: Եւ արդ, որ կարդաք ի սմանէ եւ կամ օրինակէք եւ աւքրիկ բան ի սոցանէ՝ յիշեցէք ի քեր Աստուած գանալիս եւ գանալովս *գծողս յԱմիրտովրայ բժշկն Ամասիու* եւ Աստուած յիշէ զձեզ ի միւս անգամ գալուսսն»²: Մարտնադարանյան 8871 թվահամար կրող այդ ինքնագիր օրինակի 2-47 էջերը «Ուսումն բժշկութեանն է այս» վերնագրով գործն է, երկրորդ մասը՝ (48-101 էջերը) մեր հեղինակի երախայրիք «Ախրապարին»-ը, իսկ երրորդ հատվածը «Աղիւսակերպ բառարանն» է: Վերջինս հանդիպում է միայն «Ուսումն բժշկութեան» 1459 թ. գրված նախնական տարբերակից կապարված հեղադա ընդօրինակությունների մեջ: Ի դեպ, «Աղիւսակերպ բառարանը» չկա Ամիրտովրայի 1469 թ. գրված «Օգուր բժշկութեան» սրբազանագործության առաջին մասի մեջ, որը «Ուսումն բժշկութեան» գործի հեղադա ընդարձակ եւ վերամշակված տարբերակն է: Վերջինիս մեջ «Աղիւսակերպ բառարան»-ի բացակայության պատճառը թերեւս այն է, որ հեղինակն այս դեղագիրսկան բառարանը գիրսկան ավելի ընդգրկուն ձեռով տալիս է իր հեղադա սրբազանագործությունների մեջ՝ երկրորդ «Ախրապարին»-ում եւ «Անգիրաց անպէր»-ում:

Եւ վերջապես խնդրո առարկա թ. 8871 ձեռագիրն ավարտվում է «Խօսք վարպետացն, որ ասցել են իրար աշակերպացն, որ այս արուեստն կու ուսանին սրբիւ» հատվածով, որին հետևում է վերոհիշյալ ուշագրավ հիշարկարանը: Նավեւնք, որ թ. 8871 ձեռագիրը կարեւորվում է նաեւ նրանով, որ այստեղ է գրվում տեսողական ներվերի խաչվածքի վերաբերյալ հայրնի գծանկարը, «Կերպն է գլխուն եւ աչիցն է»³ վերնագրով: Քննական բնագիրը կազմելու ընթացքում պարզվեց, որ այս գծանկարը առկա է նաեւ Մաշտոցյան Մարտնադարանի թ.թ. 413⁴ եւ 8104⁵ գրչագիր օրինակներում: Այս երկու ձեռագրերի համեմատական բնությունը ցույց տվեց, որ թ. 8104 ձեռագիրը (գրչության ժամանակը 1615 թ.)⁶ գրեթե չունի մայր ձեռագրից քերականական եւ տարբերակներով մայր ձեռագրից, իսկ թ. 413 ձեռագրի համար (գրչության ժամանակը՝ 1635 թ.)⁷ հիմք է ծառայել վերոհիշյալ թ. 8104 օրինակը:

Մարտնադարանում կան «Ուսումն բժշկութեան» երկու այլ գրչագիր օրինակներ (թ.թ. 8873⁸ եւ 6718⁹), որոնց մեջ, երբ ավարտվում է աչքի կազմախոսությանը նվիրված բաժինը, մինչեւ բնագրի «Վասն սրբազան սկանչին» գլուխը, ընդօրինակողները էջի վրա մաքուր մակերես են թողել այդ գծանկարի համար, հավանաբար՝ հեղադայում նկարչի կողմից

2 Մար. ձեռ. թ. 8871, էջ 182ա:

3 Անդ, էջ 17բ:

4 Մար. ձեռ. թ. 413, էջ 19ա:

5 Մար. ձեռ. թ. 8104, էջ 18ա:

6 Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթապյան, «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարտնադարանի», հ. Բ, Երևան, 2004, էջ 674:

7 «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարտնադարանի», հ. Բ, , էջ 405:

8 Մար. ձեռ. թ. 8873, էջ 19բ:

9 Մար. ձեռ. թ. 6718, էջ 12ա:

լրացնելու նպատակով:

Ուշադրության է արժանի թ. 6718 ձեռագրի մեջ առկա հետևյալ փաստը: Խնդիրն այն է, որ մինչև XVII դարի բժիշկ Բունիաթ Սեբաստացու կողմից Ամիրդովլաթի խնդրո առարկա գործի և մյուս բժշկարանների խմբագրումները, ի շարս այլ ընդօրինակողների, մենք չենք հանդիպում մեր հեղինակի գործերի բժիշկ ընդօրինակողի: Այսուհանդերձ, ահա թ. 6719 ձեռագրի հիշատակարանը վկայում է, որ այն ընդօրինակել է *բժիշկ* Մարխաս Ջուղայեցին: Ասել կուզի՝ կարող ենք վկայել բժշկագիտությանը նվագ հայրնի՝ XVI դ. եւս մեկ միջնադարյան հայ բժշկի՝ Մարխաս Ջուղայեցու մասին. «Բայց որ ի սոցանէ բան օգտի, նայ գիտենայ, թէ ինչպէս է շինել անարժան ծառայն աստուծոյ Մարխաս Ջուղայեցի բժիշկն և րեսնու թէ ինչպէս է յաւելցուցել զգիրքս և ինչպէս է ձեռն գդեղերուն գործութիւնն և գայլն որ ի կարգին է, որ պէտք է մեզ»¹⁰:

Ինչպէս հավաստում է ձեռագրում առկա հիշատակարանի վերոհիշյալ հատվածը, Մարխաս Ջուղայեցին, փաստորեն ոչ միայն ընդօրինակել, այլև՝ խմբագրել է («... յաւելցուցել զգիրքս») վերոհիշյալ բժշկարանը: Ի դեպ՝ Փարիզի ազգային գրադարանի թ. 245 ձեռագիր-բժշկարանի (Ֆոնդային թվահամարը 106A)¹¹ գրչի անունը նույնպէս Մալխաս (Մարխաս) Ջուղայեցի է: Այն փաստը, որ բժշկարանի առաջին երկու մասերը Ամիրդովլաթի «Օգուր բժշկութեան» և «Ախրապարին» գործերն են, առիթ է տալիս կարծելու, որ ամենայն հավանականությամբ բժիշկ Մալխասը հակված է եղել ընդօրինակել հայկապետ Ամիրդովլաթ բժշկապետի գործերը:

Ինչպէս հայրնի է, 1459 թ. հեղու Ամիրդովլաթը սրիպված էր հեռանալ Կ. Պոլսից, հաստատվել Մակեդոնիայի Ֆիլիպպոպոլ(այժմ՝ Պրովիդ) քաղաքում, որտեղ 1466-1469 թթ. գրել է իր «Օգուր բժշկութեան» ծավալուն՝ կլինիկական բժշկագիտությանը նվիրված աշխատությունը: Նարկադրաբար, այդ մեկնումի և տարագրման տարիների մասին հեղագայում Ամիրդովլաթը պետք է գրեր. «Եւ շար դժարութիւն և պարսիմունք եմ քաշել ի յանօրինաց, ի յայլագագն, ի դարաւորաց, ի թագաւորաց և ի իշխանաց. և շար գրեանք էի ժողովել ի յԱրապոց և ի Պարսից և ի Թուրքաց, և շար դարիպութիւն էի քաշել. և գժամանակին զչարս և զբարին և զպարսիմունք էի կրել, զհարստութիւն և զաղքատութիւն էի քաշել. և ի յերկրէ ի յերկիր շար բժշկութեան գարուեստն էի գործել, և փորձել էի եւ իմ միտքն շար դեղեր և թարբիպնի, և շար ծառայել էի հիւանդաց, և մեծամեծացն և իշխանաց, և հազարապետաց, և հարիւրապետաց, և քաղաքացոց, և աղքատաց, մեծի և փոքու, և շար չար և բարի էի րեսել. և հանց եղայ եւ հիմայ, որ ոչ հարստութեան կու խնդամ, և ոչ աղքատութեան կու տրտմիմ, և զամէն չարն ու զբարին մէկ կու րեսնում...»¹²: Միայն տասը տարի անց Ամիրդովլաթը կրկին վերադառնում է Կ. Պոլիս, սուլթանական պալատում վերականգնում իր նախկին դիրքը՝ դառնալով Մուսամեդ II սուլթանի անձնական բժիշկը և զբաղեցնում սուլթանական պալատի գլխավոր վիրաբույժ-ակնաբույժի պաշտոնը¹³: Նե-

10 Տե՛ս անդ, էջ 18ա:

11 R. Kevorkian, A Ter-Stepanian, manuscrits armeniens de la bibliotheque nationale de France, Paris, 1998, p. 809-812.

12 Մալ. ձեռ. թ. 414, էջ 221ա:

13 Այս փաստը արձանագրված է Փարիզի ազգային գրադարանի թ. 247 ձեռագիր-բժշկարանում՝ «Վասն նշանաց հիւանդին՝ զկենաց և զմահուն... ճառասպաշի ըռամարանին արարեալ, որ է Ամիրդովլաթ բժիշկն

տագա տարիները բեղուն էին Ամիրդովլաթի համար. տասնից քիչ ավելի տարիների ընթացքում նա գրում է երեք բարձրարժեք գիտական ստեղծագործություն՝ «Գիրք ռամկական» (1474 թ.), երկրորդ «Ախրապարին» (1481 թ.) և «Անգիտաց անպէտ» (1482 թ.):

Մեզ հայտնի է Ամիրդովլաթի կենսագրությանը վերաբերող մի ստույգ թվական եւս՝ նա մահացել է 1496 թվականին: Այդ մասին ստույգ հիշատակում կա Լոնդոնի Բրիտանական գրադարանի Օր. 3712 ձեռագիր-բժշկարանում: Այս ձեռագիրը մեծ բժշկապետի «Անգիտաց անպէտ» դեղաբառարանի ամենավաղ ընդօրինակությունն է (1490 թ.), կատարված Մարտիրոս արեղայի ձեռքով՝ Ամիրդովլաթի կենդանության օրոք: Այս նույն ձեռագրում գրչի կողմից հետագայում ավելացվել է Ամիրդովլաթի մահվան թվականը վկայող հիշատակարանը. «Փոխեցաւ ի Քրիստոս Ամիրդովլաթ բժիշկն թարգմանող գրոցս ի թվ. Ջևե (1496) դեկտեմբեր Ը(8)՝ արն հինգշաբթին» (Օր. 37124 fol. 281a)¹⁴: Պարզվում է, որ այս նույն հիշատակումը կա «Օգուտ բժշկութեան» Վահրամ Թորգոմյանի անձնական հավաքածուի այն օրինակում, որն ընդօրինակվել է Կ. Պոլսում (ԺԸ դ.) Նակոբ դայիր Պոլսեցու ձեռքով. «Փոխեցաւ ի Քրիստոս Ամիրդովլեթ բժիշկն թարգմանեալ գրոցս, ի թվին արամեան ազգի Ջևե (1496) դեկտեմբերի Ը (8), հինգշաբթի օր, ով որ որ ողորմի ասէ, րէրն նախ իոր ողորմեացի, Ամէն»¹⁵: Որքան մեզ հայտնի է, այս հիշատակարանը չկա «Օգուտ բժշկութեան» գործի բազմաթիվ այլ ընդօրինակությունների մեջ:

Ամիրդովլաթի բժշկագիտական ստեղծագործությունները ԺԹ դ. սկզբներից դառնում է ոչ միայն բժշկապարմաբանների, այլև «ռամկօրէն» լեզուն ուսումնասիրողների գիտական հետաքրքրության առարկան: Այս առիթով Ղևոնդ Նովնանյանը 1893 թ. ուսումնասիրում է Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող Ամիրդովլաթ բժշկապետի երեք ձեռագիր բժշկարաններ, որոնցից երկուսը նա դիտում է որպես «համառօտեալ խմբագրութիւն» (թիվ 75¹⁶ և 135¹⁷), իսկ մեկը՝ (թվ. 230¹⁸) «լիակապար խմբագրութիւն»: Ի մասնավորի՝ Ղ. Նովնանյանի հիշատակած «համառօտեալ խմբագրութիւն»-ը Ամիրդովլաթի նույն «Ուսումն բժշկութեան» գործն է, որի վերնագիրը և գրվելու թվականը չի ընկալվել հիշատակարանների բացակայության պատճառով. այս օրինակները հար և նման են իրար և ունեն նույն բովանդակությունը՝ Ա բաժինը նվիրված է տեսական բժշկությանը, երկրորդը՝ առաջին «Ախրապարին» է և երրորդը՝ «Աղիսակերպ բառարանը»: Ինչ վերաբերում է Ղ. Նովնանյանի հիշատակած «լիակապար խմբագրութեան» օրինակին, դա Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկասիրությունն է:

1899 թ. բժշկապարմաբան Վահրամ Թորգոմյանը նկարագրում է Պալաթի Ս. Տրեշտակապետ եկեղեցու մատենադարանում պահվող «Օգուտ բժշկութեան» երկի Բունիաթ Սերասպացու խմբագրած տարբերակը, որտեղ կար Ամիրդովլաթի հայտնի հեղինակային

Ամասիացի» և նույն ձեռագրի բաղկացուցիչ մաս կազմող «Ախրապարին» հեղինակային հիշատակարանում. «... Եւ զիս ճառահայաշի եւ պօստանճիպաշի յիշեցէք ի Տէր» (R. Kevorkian, A Ter-Stepanian, նշվ. աշխ. p. 814):

14 "A catalogue of the armenian manuscripts in the British museum", by Frederick Conybeare, London, 1913, p. 318.

15 «Նանդէս ամսօրեայ», Վիեննա, 1899, էջ 201:

16 Յուզակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 326-329:

17 Տէն անդ, էջ 427-429:

18 Տէն անդ, , էջ 596-602:

հիշարակարանը, այս գործի սրելոծման թվականի, գրվելու նպատակի և խնդիրների վերաբերյալ. «... յայսպես՝ գիր մն շինեցի ես անպիսի և անարժան ծառայա Աստուծոյ Ամիր-պովար թժիշկս Ամասիացին ի մայրաքաղաքն ի Ֆիլիպայ, ի թվականութեանս հայոց ԶԺԵ (1466) ամին և ամսոյն ի դեկտեմբերի ԻԵ-ին (25), օրն հինգշաբթի... զայս գրոցս անունն անուանեցէք *Օգուր բժշկութեան*, որ քաճիկն քիֆայեթի ի քիպ ասէ: Եւ արարի զայս գիրքս երկու բաժին, և առաջին բաժինն է *Ուսումն բժշկութեան* և թպրիբ առողջութեան և սքածումն ամէն անձինն...»¹⁹:

Տիշարակարանի վերջում արձանագրված է բժշկարանի ավարտման թվականը. «Թարգմանեցաւ պարտական բժշկարանս՝ ի մայրաքաղաքն ի Լռումիայ, որ թարգմանի Ֆովիպայ, ի թվականիս հայոց ԶԺԸ (1469) ամին, ի դեկտեմբեր ամսոյ ԻԶ (26), և ի կաթողիկոսութեան քեր Յովակիմի: Որք կարդայք կամ օրինակէք՝ թողութիւն մեղաց խնդրեցէք ի Քրիստոսէ, թարգմանողի գրոցս Ամիրպովար թժիշկն, և աստուած զձեզ յիշէ իւր միւս անգամ զարտարն, ամէն»²⁰: Այս կարեւորագույն հիշարակարանից բացի Պալաթի Ս. Նրեշարակապետ և կեղեցու մարենադարանի ձեռագիրն ունի մեկ այլ՝ ոչ պակաս կարեւոր հիշարակարան, որից հայրնի է դառնում, որ այս օրինակը ԺԷ դ. խմբագրել և շարադրել է թժիշկ Բունիաթ Սերասպացին. «Այլ ես գվերջին աշխատողն սորա գՊունիաթ Սերասպացի թժիշկն, որ բազում աշխատանքս կրեցի ի յայս արհեստս և բազում բժշկութիւն կարարեցաւ շնորհիւն աստուծոյ և այս պարտական գրոցս խիստ հաւանեցաք և գրել քուարք...»²¹:

Նույն թվականին Վ. Թորգոմյանը նկարագրում է Ղալաթիայի ազգային կենտրոնական մարենադարանի «Օգուր բժշկութեան» մեկ այլ օրինակ, որի հիշարակարաններից մեկը կրկին հավաստում է «Օգուր բժշկութեան» աշխատասիրության՝ Բունիաթ Սերասպացի թժիշկի խմբագիր լինելու իրողությունը: Ինչպես նշում է Վ. Թորգոմյանը. «Եւ այսու ատելի պիտի հասարարուի, յուսամ, թէ՛ Պունիաթ Սերասպացի թժիշկն եղած է իրաւ, որ Ամիրպովարայ գործը խաւարէն հանած է, շարադրած է և ծանօթացուցած է իւր ազգին»²²:

Վերոհիշյալ փաստերը մեզ հեղաբոլորող թեմային՝ «Ուսումն բժշկութեան» երկասիրությանն առնչվում են հետևյալ պարագայում: Ինչպես հայրնի է «Օգուր բժշկութեան» երկը, որի առաջին մասը մեր ուսումնասիրության առարկա «Ուսումն բժշկութեան» գործն է, 1940 թ. (վեց ձեռագրերի բաղադրությամբ) առաջինը հրատարակել է ակադեմիկոս Սյուրիանու Մալխասյանը: Բնագիրը կազմելիս Մալխասյանցի ձեռքի քակ է եղել «Ուսումն բժշկութեան» Մաշտոցյան Մարենադարանի թ. 8871 ինքնագիր օրինակը, որը համեմատվել է Բունիաթի խմբագրած՝ կրկին մարենադարանյան թ. 414 ձեռագիր-բժշկարանի հետ: Մասնավորապես այս առիթով Մալխասյանը գրում է. «Ա (8871) ձեռագիրը չի կարելի մյուս ձեռագրերի հետ համեմատել քարքեր ընթերցվածքները ընդհանուր համար, քանի որ ոչ իբրև բնագիր է ծառայել մյուս ձեռագիրներին, և ոչ արագրված է նրանից, այլ ինքնուրույն աշխատություն է «Օգուր բժշկութեան» գրքից քարք քարի առաջ գրվածը»²³:

19 «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1899, էջ 108:

20 Տե՛ս անդ:

21 Տե՛ս անդ, էջ 111:

22 Տե՛ս անդ, էջ 377:

23 **Ամիրպովար Ամասիացի**, Օգուր բժշկութեան, խմբագրությամբ Սյուր. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ ԼԲ:

Այս էր առիթը, որ Մալխասյանցը «Օգուր բժշկութեան» բնագիրը հրապարակելիս ցանկացել է Ամիրդովլաթի առաջին գիտական սրեղծագործության ինքնագիր փաթեթակը որպես հավելված գերեզել «Օգուր բժշկութեան» գրքի վերջում, որը նա այդպես էլ չհրազործեց, քանզի հմուր բանասերը կասկածներ ուներ, որ թ. 8871 ձեռագիրը Ամիրդովլաթի ինքնագիրը չէ, այլ ընդօրինակություն է: Դրա համար հիմք էր հանդիսացել Վիեննայի միսիոնարյան միաբանության մարենադարանի «Ուսումն բժշկութեան» վերը նշված «համառօտեալ խմբագրութեան» մի օրինակից մեջբերված այն հարվածը, որը փեղ էր գրել Ղ. Նովնայնանի «Ներագոյութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ» աշխատության մեջ. «... եփ այն, որ անասուն է՝ *գիտուն* Աստուած չի ընդունիլ»²⁴: Այս փողի համեմատությունը Մարենադարանի թ. 8871 ձեռագրի նույն հարվածի հետ նկատելի է դարձնում մի ակնբախ փաթեթություն. «... զի, որ անասուն է՝ *լիպուն* Աստուած չի ընդունիլ»: Սա էլ առիթ էր հանդիսացել Մալխասյանցի համար կարծելու, որ թ. 8871 ձեռագիրը Ամիրդովլաթի ինքնագիրը չէ, որովհետև նա չէր կարող այսպիսի աղճատում կատարել (ճիշտ բառն է «գիտուն», այսինքն՝ խոռածը՝ պակասավորը, այնինչ «լիպուն» աննշանակ բառ է):

Ներագայում Մալխասյանցին հայտնի դարձան Մաշտոցյան մարենադարանի «Ուսումն բժշկութեան» եւս երկու օրինակներ, որոնք ունեին ուղիղ ընթերցվածք՝ «գիտուն», իսկ թ. 8871 ձեռագրի վերոնշյալ «աղճատումը» բացատրվում է հետևյալ կերպ. թ. 8871 ձեռագրում սկզբնապես գրված է եղել «գիտուն», բայց այս բառը ձեռագրի թղթի վնասվելու պատճառով աղճատվել, դարձել է «լիպուն»:

Այսպիսով փաթեթակը Մալխասյանցի կասկածը եւ թ. 8871 ձեռագիրը բժշկագիտության մեջ դիպվեց որպես միակ եւ եզակի ինքնագիր օրինակ: Այսուհանդերձ Մալխասյանցի հրապարակված «Օգուր բժշկութեան» երկի բնագրի առաջին՝ փեսական մասի համար հիմք հանդիսացան «Ուսումն բժշկութեան» Բունիաթ Սերասպացու կողմից խմբագրված փաթեթակները, որոնք լի էին հավերժմունքով եւ խմբագրումներով՝ հարկապես բժշկարանի նախաբանում եւ մարդակազմության բաժնում, որոնք բազմաթիվ էական փաթեթություններ ունեին «Ուսումն բժշկութեան» երկի հեղինակային ինքնագրից: Ի մասնավորի՝ այս նույն բաժնի «Եւ մարդակազմութիւն մի այլ գրոցն» հարվածը, որը գրավում է մի քանի փասնյակ էջ, Բունիաթ բժիշկը ավելացրել է ուրիշ հեղինակային աղբյուրից, ինչպես գրում է ինքը. «... այլ գրոց»: Սա է, ի դեպ, պարզաբար, որ Մալխասյանցը գիրքը հրապարակելիս փիլոզոսաթերթի վրա ավելացրել է «Պունիաթ Սերասպացի բժշկի խմբագրած», «... որպեսզի մի կողմից Ամիրդովլաթը չճանաչվի հեղինակ եւ պարասխանապու այն հարվածների համար, որ յուր գրածները չեն, եւ մյուս կողմից անհետ չկորչի անունը Պունիաթ բժշկի, որ շար աշխատանք է թափել այս գրքի վրա»²⁵: Անշուշտ՝ Մալխասյանցի հրապարակված (Բունիաթի խմբագրած) եւ Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» գործի ինքնագիր օրինակի մեջ կան զգալի փաթեթություններ: Ի հավաստումն սրա համեմատենք «Ուսումն բժշկութեան» ինքնագիր օրինակի եւ «Օգուր բժշկութեան» երկասիրության առաջին բաժնի համանուն գլուխները.

24 Ղ. Նովնանեան, Ներագոյութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, փետր Բ, Վիեննա, 1897, էջ 348:

25 Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուր բժշկութեան, էջ ԻԸ:

Ուսումն բժշկութեան

Օգուտ բժշկութեան

Ա. Յառաջին դուռն յիշենք զբժշկութեան զուսումն և զընդոքն և զաւրութիւնն, և թէ որպէս է բժիշկն, և որպէս է փառքն բժշկին, և որպէս ճանաչէ զմահացու դեղերն:

Այլ գիտացիր, որ յառաջն այս ուսումն ի յազգաց հեղինացոցն ի մէջն էր և յետոյ ուսանազգաց հնդիքն և զաւրացաւ այս ուսումն ի Զնդութեան: Եւ յետոյ առին զայս ուսումն հռոմայեցոց իմաստնասէրքն և հեշտեցուցին և յետոյ առին պարսիքն և ա՛յլ հեշտ արարին, և պատեհ է որ ի մեծ թագօրացն ի խէչն աղէկ վարպետ և իմաստուն և գիտուն հաքիմ կենայ: Որ ժամ որ աւր մի թագաւորին հիւանդութիւն դիպի, նայ չերդան ի յայլ տեղաց բերեն, այնոր համար, որ մարդուն բնութիւնն ի ժիր առողջ չի լինիր: Որպէս, որ թագաւորաց սահման է, որ սլէի շինեն և դնեն ի խզնան, որ աւր մի, թէ չարկամ գայ, նա հանէ զան սլէնին ի խզնայէն և բաժնեն հեծելին և զչարկամն յախտեն: Եւ թէ չկենայ չարկամ, նայ ի խզնան դնեն և պահեն: Եւ նոյնպէս և հագիմն այլ պիտի, որ ի յառողջութիւնն պահեն այն աւուրն համար, որ պիտու գայ: Եւ բժշկն այլ պիտի, որ իմաստուն լինի եւ գիտուն և յուլ չլինի և պարծենկոտ եւ սուտ զրուց չի լինի և վարպետ աշակերտել լինի և շատ գրեանք կարդացել և շատ թաճրուպանի գտել: Եւ խելօք և խրատայտու լինի և տամահի չի լինի և յաղքատաց իրք չի քնքշայ և ողորմած սիրտ լինի և յաղքտաց տամահ չայնէ: Եւ զպէտն ըղորդ առնէ և թէ այսպէս չի լինիր, զոր ասցի, նայ լաւն այն է, որ զինքն ի հիւանդնի խէչ չի տանեն և նորայ դեղ չառնէ:

Մատ. ձեռ. ք. 887, էջ 3ա

Գլ. Ա. Առաջն ուսանիլ զբժշկութեան զչաքն եւ խափանել զմահացու դեղոցն զօրութիւնն:

Եւ գիտացիր, որ յառաջն այս ուսումն ի հեղինացոցն ելավ. և յետոյ ուսան ի նոցանէ հնդիկքն. և յետ այնոր ուսան հռոմաց իմաստասէրքն: Եւ ի հնդկաց մէջն այս ուսումն քիչ էր և նուազ և վատուծ: և շատ չարչարանօք կու ուսանէին, և բայց հռոմաց իմաստասէրքն հեշտ արարին և աղէկ ուսան և ուսուցին ամեն ազգին, և նոցա բնութիւնն աղէկ և նմանութիւն էր այս արուեստիս, և աղէկ կարողային և կատարէին:

Եւ թագաւորաց և մեծուանց պատեհ է, որ իմաստուն և ճարտար արուեստաւոր բժիշկ մ'ն ի մօտն պահէ, այնոր համար, որ յորժամ պիտենայ՝ տեղաց մ'ն այլ չի փնտռեն, կամ այլ յերկրէ բերեն, և հանապազ մարդն առողջ չի կենար:

Եւ դարձեալ ասացին իմաստասէրքն, թէ թագաւորաց սահմանքն է, որ զօրք կուվուն ժողվեն և տուն շինեն և ի մէջն դնեն զպլէնին և պահեն այն աւուրն համարն, որ թէ չարկամն յայտնի ի դիհաց մ'ն՝ նա բանան զայն տունն, որ սլէին կայ ի ներս, և հանեն զսլէին և բաժանեն զօրացն և հեծելին:

Թէ չարկամ չի կենայ՝ այն սլէին ի յայն տունն մնայ, և ի ժիր զայն սլէնինն աշել կու պիտի և պահել աւուր մ'ն պիտան:

Եւ հաքիմն այլ կու պիտի, որ ուսումն և իմաստութիւն ունենայ և ճարտար լինենայ ի յիր արուեստն, և յուլ և վատուծ է նենգաւոր և ռիսասիրտ չի լինայ. շատ գրեանք լինի տեսել և ի վարպետէ կարդացել, և իր մտացն շատ ստածուն լինի փորձել, և բարեմիտ և խրատատու լինայ. և կծնի և գողի և զանծասէր և տամահի չի լինի, և աղքատաց իրք չի քննէ և աստուծոյ սիրուն համար դեղ առնէ:

Եւ թէ այսպէս, որ գրեցի չի լինի և հակառակն լինի՝ լաւն այն է, որ զայնպիսի բժիշկն չի տանին առ հիւանդն և դեղ չառնէ հիւանդին:

Մատ. ձեռ. ք. 414, էջ 225բ-226ա:

Նկարագրութիւնը մեկն է՝ 1940 թ. Սյրեփանոս Մալխասյանցի աշխատասիրութեամբ Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» գրքի առաջին մասում մեջբերված բաժինը չի կարող համարվել Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» ինքնագրի հեղինակային անաղարպ փարբերակ, հանգամանք, որն առավել եւս կարեւորում է «Ուսումն բժշկութեան» գործի քննական բնագրի հրապարակման եւ բժշկագիտական շրջանառության մեջ դնելու անխրաժեշտութիւնը: (Այդ աշխատանքը ձեռնարկվել եւ իրականացվել է փողերիս հեղինակի կողմից):

«Ուսումն բժշկութեան» գրքի բնական բնագիրը կազմելիս մեզ համար հիմք է հանդիսացել Մարենադարանի թ. 8871 թվահամարի մայր օրինակը, որի հետ համեմատել ենք տարբեր ժամանակներում ընդօրինակված մարենադարանյան հավաքածուի տասից ավելի ձեռագիր ընդօրինակություններ:

Ամիրդովլաթն իր այս աշխատությունը շարադրել է ժամանակի հայերեն խոսակցական լեզվով, ինչպես ինքն է ասում. «որպեսզի մարչելի լինի քերական չգիրացողների համար»: Այսպես կարելի է մի հանգամանք եւս: Այս գործը, փաստորեն, սկզբնաղբյուրի իր լեզվապաշարով (քանզի դա ԺԵ դ. հայերեն խոսակցական աշխարհաբար լեզվի հեղինակային՝ հեղափոխական չափերով ընդգրկված ինքնագիր բնագրային աղբյուր է) ուսումնասիրության նյութ է դարձել հայ աշխարհիկ լեզվի զարգացման պարմությունն ուսումնասիրողների համար: Մասնավորապես՝ հմուտ բանասեր Ղեւոնդ Նովմանյանն իր «Ներագոյությունը նախնեաց ռամկօրէնի վրայ» աշխատության մեջ, որպես ԺԵ դ. փայլիկ խոսակցական աշխարհաբար լեզվի անաղարտ բնագրային աղբյուր, «ռամկօրէն լեզուի» կարարչալ օրինակներ ընտրել է հենց Ամիրդովլաթի խնդրո առարկա աշխատասիրությունը, նաև՝ «Օգուր բժշկութեան» երկը:

Գնահատելով Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» աշխատասիրությունը, հարկ է ի սկզբանե քննել այն իր երկու, թերեւս իրար լրացնող կողմերից: Անշուշտ սա կարելի է ասել հենց ինքն իր բժշկագիտական արժեքով, որի մասին կիսովի ստորել: Բայց այս գործը ոչանակալի է նաև գուր կիրառական մեկ այլ նկատառումով: Սա, փաստորեն, ինչպես թելադրում է աշխատասիրության վերնագիրը՝ «Ուսումն բժշկութեան», ուսումնական ձեռնարկ է բժշկություն սովորողների և բժիշկ մասնագետների համար: Ինչո՞ւ ենք կարելիքում այս հանգամանքը, որովհետև սրանով փաստվում է հայ բժշկագիտական մարի *շարունակականության* հասկանալիքը: Միջնադարյան հայ բժշկապետները, գերծ մնալով միջնադարին հարույ գիտական նեղ համբարային սահմանափակումից՝ իրենց գիտելիքները թաքցնելու սովորույթից, մարառոգ էին գիտության սերնդափոխ շարունակականության համար: Եւ շարունակելով մեծն Ներացոց եկող այս ավանդույթը, Ամիրդովլաթը ահա սրելովում է իր ուսուցողական բժշկարանները: Ինչպես ինքն է գրում «Անգիւրաց անպէր»-ում. «Եւ ես, անպիւրան ծառայ ծառայիցն Աստուծոյ, ի յայս արուեստս շար աշխարհացայ, մինչև գսա գրայ, եւ ստուգեցի կրկին կրկին, որ հեշտութեամբ յիմանան, եւ ուսնողացն հեշտ լինի, եւ դիպողութեամբ ուսանի եւ հասկանայ գծածուկ արուեստն, որ այս ամենայն բժշկապետքն գայս ծածկեալ էին, եւ չէին գրել ի բժշկարաննին եւ ծառայիդ յայտնեցի»²⁶:

Այս հանգամանքը մեկից ավելի անգամ շեշտադրվում է «Ուսումն բժշկութեան» գործի մեջ. «Եւ այսպէս արար Տէր Աստուած զծնունդն մանկանն, եւ մենք զինքն՝ փոքր եւ քիչ շինեցաք, որ կարդացողն շուր հասկնայ»²⁷ կամ «... գիտացիր, որ հաքմնին ի վերայ պահրանին շար խաւսք են ասցել եւ շար գրեանք են շինել ի վերայ այստր, եւ թէ ես՝ գամէն կարգաւ յիշեմ, նայ խաւսքն շար կու լինի եւ ուսնաղն կու յաճիգի: Եւ այլ ես յիշեմ գամէն աղէկ խաւսք իր տրեղն, հանց որ ամէն կարդացողի հեշտ լինի եւ ուսնողին դժար չի կենայ խկի»²⁸:

26 «Ամիրդովլաթի Ամասիացոյ Անգիւրաց անպէր», ի լոյս եած Կ. Յ. Բասմաջեան, Վիեննա, 1926, էջ 11:

27 Մար. ձեռ. թ. 8871, էջ 10ա:

28 Տե՛ս անդ, էջ 39ա:

Խիստ էն Ամիրդովլաթի պահանջները բժշկի մասնագիտությունը ընկալած անձանց նկարագրով: Բժշկարանի առաջին իսկ գլուխը. «Յառաջին դուռն յիշենք զբժշկութեան գոտումն և զշնորքն և զարութիւնն, և թէ որպէս է բժշկն և որպէս է փառքն բժշկին»՝ նվիրված է բժշկի մասնագիտական և բարոյական չափանիշներին. «Եւ բժշկն այլ պիտի, որ իմաստուն լինի և գիտուն և յուլ չլինի և պարծենկոտ և սուր գրուց չի լինի և վարպետի աշակերպել լինի և շար գրեանք կարդացել և շար թաճրուպանի գրել: Եւ խելոք և խրապայտու լինի և փամսի չի լինի և յաղթարաց իր չի բնբշայ և ողորմած սիրտ լինի և յաղթարաց փամսի չայնէ: Եւ գպէտն ըզորդ առնէ և թէ այսպէս չի լինի, գոր ասցի, նայ լան այն է, որ զինքն ի հիւանդին իսէ չի փանէ և նորայ դեղ չառնէ»²⁹: Բժշկի բարոյական նկարագրի մասնագիտական կարարելության այս պահանջները, որոնք իրենց ստույգ ձևակերպումն են սրացել անորիկ աշխարհի մեծագույն բժիշկ Նիպոկրատի «Երդման» մեջ, այսօր ևս չեն կորցրել իրենց արդիականությունը:

Ինչ վերաբերում է այս գործի բժշկագիտական արժեքին, ապա այն կարևորվում է առաջին հերթին այն հանգամանքով, որ սա, ինչպես նշեցինք, միջնադարյան հայ բժշկագիտության մեջ փեսական բժշկության վերաբերյալ ժամանակի ամենաընդգրկուն գործն է, քանզի մինչև Ամիրդովլաթը սրելով ինչպես բժշկարանները հիմնականում քննարկել են դեղագիտական կամ կլինիկական բժշկությանը վերաբերող հարցեր: Նկարի ունենք «Գագիկ-Ներսիսյան» բժշկարանը, Մխիթար Ներսիսի «Ջերմանց մխիթարութիւն»-ը և Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցառոց» բժշկարանը:

«Ուսումն բժշկութեան» աշխատասիրության մեջ Ամիրդովլաթը բնության է ենթարկել փեսական բժշկությանն առնչվող բնախոսության, կազմախոսության, առողջապահության բազմաթիվ խնդիրներ: Ամիրդովլաթի բնախոսական պարկերացումները հիմնված են ամբողջ միջնադարում գերիշխող հանրահայտ չորս փարքերի ուսմունքի վրա. «Բոլոր արարածների հիմքը և «սերմը» չորս փարքերն են, ամեն ինչ սրանց խառնուրդից է գոյանում՝ «ուժովն և գործովն և զօրութեամբ»: Եւ այս չորս փարքերը՝ ունենալով որակական հակառակ հատկանիշներ, խառնվելով միմյանց, ներդաշնակություն են ստեղծում թե՛ բնության և թե՛ մարդու մարմնում:

Արևելյան բժշկության մեջ ծնունդ առած և հունական բնափիլիսոփայության մեջ փեսության վերածված հենց այս հիմնական դրույթներն են ընկած Ամիրդովլաթի բնախոսական պարկերացումների հիքում: Ըստ Ամիրդովլաթի՝ օրգանիզմի կենսաբանական հիմքը նույնպես չորս հեղուկներն են և . «... ամեն մէկին խառնելովն մէկ մէկի հակառակ է ստեղծել արարիչն Աստուած», իսկ սրանց խառնվելը երկու կերպ է լինում՝ «ըզորդ» և «հակառակ»: «Ըզորդը» (ճիշտը) օրգանիզմի չորս հեղուկների ներդաշնակ հավասարակշռված խառնվելն է, իսկ «հակառակը»՝ երբ այս հեղուկներից որեւէ մեկը գերակշռում է: Սա բժշկագիտության մեջ հայտնի հիպոկրատյան հեղա-հյութային ախտաբանության փեսությունն է, որը մոտ քսաներկու դար մնաց հիվանդությունների ախտաձագումը բացառող միակ գիտական փեսությունը:

Ամիրդովլաթի սաղմնաբանական պարկերացումները կրկին արձագանքում են անորիկ և միջնադարյան բնափիլիսոփաների և բժիշկների ընկալումներին. «գավակը գոյանում

29 Տե՛ս անդ, էջ 3բ:

է փղամարդու եւ կնոջ սերմից մերձավորության ժամանակ», եւ եթե սերմն արգանդի աջ կողմն է ընկնում փղա է ծնվում, իսկ եթե ձախ կողմը՝ աղջիկ: Մաղմի կերպարանավորումը Ամիրդովլաթը պարկերացնում է հերեյալ կերպ. ամենից առաջ սրեղծվում է սիրտը, ուղեղը, լյարդը եւ 40 օր անցնելուց հետո «միս է կապում», ապա սրեղծվում են ոսկրերը, անոթները, ջղերը եւ այլ «գոգվածքները»³⁰:

Բժշկարանի մարդակազմության բաժինը եւս ընդհանուր առմամբ արտացոլում է միջնադարյան կազմախոսական պարկերացումները, որոնց հիմքը գալենյան անատոմիան էր: Եւ սա բնական է, քանզի մարդակազմության բնագավառում Գալենի՝ կազմախոսությանը նվիրված դասական աշխատությունները³¹ մինչեւ ԺԶ դարը մարդակազմության անփոխարինելի ուղեցույցներ էին :

Ըստ Ամիրդովլաթի՝ փղամարդն ունի 248 ոսկոր, կանանց ոսկրերը չորսով ավելի են. «... եւ այս չորս ոսկրն, որ յաւելի է ի կնոջն ծնողայ փղ կայ, որպէս մարմնը յիրար ի կիպ է: Երբ փղան ծնանիլ գայ՝ այն չորս ոսկրն ի յեւր բաժանի եւ ելանէ փղան եւ այլի այն ոսկրքն յիրար գան եւ կպին»³²: Ջղերը 75-ն են, մկանները՝ 527, մեծ եւ փոքր հոդակապերը՝ 508, երակները 366 են, երեք մեծ երակ՝ իրենց 122 ճյուղով: Ամեն շարժման երակ սրտին է կցված, իսկ անշարժը՝ լյարդին:

Մարդն իր հինգ զգայարանների միջոցով ունի հինգ զգայություն. առաջինը՝ աչքի տեսողությունը, երկրորդը՝ լսելիքը «դրված է ականջում», երրորդը՝ հոտառելիքը «քթի մեջ է», չորրորդը՝ «համ առնող է, փրկվողով է լեզվի մեջ», հինգերորդը՝ «խմանում է խոշորը, կալուղը, ծանրը եւ թեթևը» հատուկ է ձեռքին:

«Ուսումն բժշկութեան»՝ «Վասն գաղափարիս պահելոյն կամարն Աստուծոյ, թէ որպէս լինի եւ ինչ առնեն, որպէս է առողջութեան նշանն» վերնագիրը կրող գլուխը նվիրված է առողջապահության մի շարք խնդիրների. հանգամանորեն քննարկելով առանձին առողջապահական տարրեր հարցեր («Վասն թրակի կերակուր ուրելուն», «Վասն գրաժայ մրգեր ուրելուն», «Վասն ջուր խմելոյ», «Վասն գինի խմելոյ», «Վասն քուն եւ արթուն կենալոյ» եւ այլն) Ամիրդովլաթը համակարգված ձևով ներկայացնում է դրանցից յուրաքանչյուրի առողջապահական նշանակությունը՝ իր իսկ ձևակերպմամբ. «անձը ուժով եւ գորավոր պահելուն»:

Նկարաքերական են, օրինակ, գինու օգուրների եւ վնասների մասին նրա առողջապահական դատողությունները. «եւ թէ գինքն (գինի) հեւր անուշ կերակրով խմէ՝ նայ գանձն աղէկ պահէ եւ գիրցնէ, եւ թէ յինքն ջուր խառնէ եւ խմէս՝ գջրին գիճութիւնն յամեն անդամքն հասանի եւ աղէկ քուն բերէ եւ խնդումն եւ ուրախութիւն բերէ: Եւ այս ամեն այն ժամ լինի, որ գինքն չափաւոր խմէ եւ *գինքն չի փայ ի գինի*: Եւ թէ շատ խմէ եւ հարբենայ՝ նայ գինք, որ

30 Վերոհիշյալ բժշկարանի սաղմնաբանության, ինչպես նաեւ պրոֆի ներարգանդային աճի եւ զարգացման խնդիրներին վերաբերող բաժինները գիպական վերլուծության է ենթարկել հայրնի մանկաբարձ-գինեկոլոգ Գ. Նարոթյունյանը իր «Գինեկոլոգիան եւ մանկաբարձությունը Նայաստանում հին եւ միջին դարերում» աշխատության մեջ (տե՛ս Գ. Գ. Արությունյան, Гинекология и акушерство в Армении в древние и средние века, Ереван, 1974, էջ 146-147, 157-160):

31 Գալլեն, О назначении частей человеческого тела, Москва, 1971.

32 Մաղմ. ձեռ. թ. 8871, էջ 19ա:

ի վերել յիշեցի, նայ չի լինի, բայց գէն առնէ և զանձն վարածցնէ և զխելքն քանի և գէշ հիւանդութիւն ածէ ևս հանց եղ, որ դեղ չի լինիր իր»³³:

Բժշկարանի՝ առողջապահական խնդիրներին նվիրված դիտարկումներից ոչ պակաս, թերևս առավել հետաքրքիր են Ամիրդովլաթի՝ հիվանդությունների ախտորոշման մեթոդները: Դրանք կրկին անգամ խոստում են Ամիրդովլաթի փեսական մեծ պարտապարտությունները: Կանոնները փորձնական, աշխարհային հմտությամբ ձեռք բերած նորագույն դիտարկականության մասին: Այս փեսականից ուշագրավ է բժշկարանի 50-րդ՝ «Վասն թուրքի երակ ճանաչելուն» գլուխը, որտեղ հեղինակը հիվանդություններն ախտորոշելիս կարևորում է անոթագրվող քննության մեթոդը. «Եւ ով որ կուգէ, որ ճանաչէ՝ կու պիտի, որ բռնէ գերակն չորս մարտնիս ի կից, որ չի գարէ գմարն ի մէկ մէկի... և լաւն այն է, որ զձախ թուն բռնէ և աղվոր աշէ, որ յիմանայ, թէ որպէս է և յիմանա զհիւանդ մարդուն երակն», ապա է՝ «... վկան երկին և զքնական փորձութիւնն այլ սիրտն ունի, և զկենդանութեան նշանն և զփորձութիւնն սիրտն ունի, և ի յերկէն կու ճանաչվի կենդանութիւն և հիւրնդութիւն մարդուն»³⁴:

Ինչպէս հայտնի է, հիվանդությունների ախտորոշման այս եղանակը՝ պոլսոդիագնոստիկական, կարարյալ զարգացման է հասել Տին Արեւելքում, չինական բժշկագիտության մեջ դեռ Քրիստոսի ծննդից չորս հազարամյակ առաջ: Այսուհանդերձ հայ միջնադարյան բժիշկը, անկախ իր փեսական իրազեկությունից, պարզ է օժտված լինել նուրբ մասնագիտական դիտարկականությամբ, որպէսզի իր բժշկարան ներմուծել հիվանդության ախտորոշման հետևյալ խորհուրդը. «և յորժամ երակն ազգի ազգի աղայ, նայ գուշակէ, որ ազգի ազգի վարժութիւն կայ ի յանձն: Եւ թէ երակն մանդր աղայ, նայ պեղծ խլի կայ ի սրամոր բերանն և բոլոր է առել զսրամորն և կու խածնէ և այնոր համար երակն կու դողայ և կու փաթնայ: Եւ յորժամ երակն գեր մոջիմ ժաժի գուշակէ գմանն հիւրնդին մարտեցել է»³⁵:

Հիվանդություններն ախտորոշելիս Ամիրդովլաթը կարևորում է մարդու արտաքին բնութեան (մեզի, խորիսի, կողանքի, քրտնի) մանրագին քննությունը, մեծ նշանակություն փառվ դրանց գույնին, հոտին, քանակությանը, կոնսիստենցիային: «Վասն զկարտրայ ճանաչելն և զարտաքս ճանաչելն», «Վասն այլ խաւսք պահրանին և քրտնացն հիւրնդին» գլուխներում վկայակոչելով անտիկ հունա-հռոմեական և արաբ մեծ գիտնականներին (Արիստոտել, Հիպոկրատ, Դիոսկորիդես, Գալեն, Օրբիգակես, Պոլոս Էգիևացի, Ար. Ռազի, Իբն-Բայար, Իբն-Սինա) Ամիրդովլաթը ժամանակակից և ապագա բժիշկներին իբրև ուղեցույց և հանձնարարական փառվ է հիվանդության ախտորոշման, ինչպէս և բուժման՝ իր ժամանակի համար կարարյալ ու գործնական խորհուրդներ: Ի դեպ, երբ մենք նշում ենք, որ Ամիրդովլաթի բժշկագիտական հայացքները հիմնականում արտացոլում են անտիկ և արաբական բժշկագիտական պարկերացումներից եկող միջնադարյան ընկալումները, դրանով բոլորովին չի նվազում խնդրո առարկա բժշկարանի գիտական ինքնուրույն արժեքը, քանզի Ամիրդովլաթն այդ ամբողջը մեկտեղել է գիտական բժշկի իր բազմակողմանի դիտարկումների, քննադատարար ճշգրտումների, սեփական փորձնական աշխարհային վրա հիմնված արժեքավոր եզրահանգումների հետ:

33 Մար. ձեռ. թ. 8871, էջ 23բ:

34 Տե՛ս անդ, էջ 32բ:

35 Տե՛ս անդ, էջ 34ա:

Իրոք, շնորհիվ Ամիրդովլաթի գործերի՝ իր ժամանակի համար գիտական բարձր արժանիքներով օժտված այդ սպեղծագործությունները մի քանի հարյուր տարի ուղեցույց դարձան հայ բժիշկների հեղափոխական սերունդների համար, և իրավամբ հաջորդ բժշկական սերունդները նրան անվանեցին մեծ բժշկապետ, որին մինչ այդ արժանացել էր միայն մեծն Մխիթար Ներսիսը:

Նոդվածի ծավալը հնարավորություն չի ընձեռում ավելի մանրամասնել Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկության» աշխատության բժշկագիտական բոլոր շերտերը: Դրանց հանգամանակի բժշկագիտական վերլուծությունը կիրականացվի այս բնագրի առաջիկայում հրատարակվելիք առաջաբանում:

Այսուհանդերձ ամփոփելով՝ շեշտենք, որ Ամիրդովլաթի այս գործն իր սեղմ ծավալով հանդերձ, դարձել է հայ միջնադարյան տեսական բժշկագիտության կարևոր ձեռքբերումներից մեկը՝ իր գիտական մնայուն արժեքով դիմանալով ժամանակի քննությանը: